

պէս ուշադիր պէտք է ըլլան օդային կազի գործարաններուն մէջ աշխատողները եւ թունաւորման առաջին նշաններուն իսկ պէտք եղած զգուշութիւնները ձեռք առնեն:

3. Իթմբախաուն ջրածին (Hydrogène sulfuré).— Նեխած հաւկիթ հոտող շատ թունաւոր կազ մըն է: Զի մը կը սատկի 1/200 համեմատութիւն պարունակող մթնոլորտի մը մէջ: Կարգ մը մետաղներ սեցնելու (bronzage en noir), շագիի խոշոր կաթսաներու եւ մեծ հոցներու (haut-fourneaux) կամ փոսերու մաքրութեան, օճառի եւ մորթի պատրաստութեան, կոյուղիները կամ աղբանոցները պարպելու աշխատողները ենթակայ են թունաւորման:

Կարգ մը ուրիշ թունաւոր կազերու մասին պիտի խօսինք մասնաւոր նիւթերով թունաւորման առթիւ:

Բժ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

### ՃՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Ոչխարի մորթը՝ Պաղառութեան դէմ.— Սասունի շրջանին մէջ երբ հիւանդ մը ընդհանուր հիւանդութեան նախանշանները զգայ (ջերմ, դող, ընդհանուր կտորտուք կայլն.), ոչխար մը կը մորթեն, տիկը (մորթը) կը հանեն եւ անոր մէջ կը կոխեն հիւանդը մինչեւ վիզը: Հոն կը թողուն 1-2 ժամ որ լաւ մի քրտնի եւ յետոյ տաք լոզանք մը առնել կուտան: «Ուրկէ յետոյ, հիւանդը կը բուժուի» կը զրէ Պ. Ռ. Մ. եւ կը հարցնէ թէ ինչպէս կարելի է բացատրել պարագան:

Ըսենք անմիջապէս որ ընդհանուր քրտինքը եւ լոզանքն է որ հիւանդին մօտ յառաջ կը բերէ ընդհանուր բարելաւումի զգացում մը, որուն կրնայ յաջորդել բուժումը եթէ եղածը պարզ պաղառութիւն մըն է:

Ներկայիս այդ արդիւնքը կարելի է ստանալ aspirineի 2 գնդիկներով կամ նման դեղերով: Այսուհանդերձ վերոյիշեալ դարմանումը կը թելադրենք փորձել անոնց որոնք կը կարծեն թէ բժշկութիւնը յառաջդիմութիւն չէ ըրած...:

Այս առթիւ կը թելադրենք մեր ընթերցողներուն «Բուժանք»ի հաղորդել ժողովրդական բժշկութեան վերաբերեալ տեղեկութիւններ պայմանաւ որ վաւերական ըլլան:

